ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

ԱՂՈՒԶՈՒՄՅՅԱՆ Գ.Վ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

21-րդ դարի քաղաքացուն հատուկ տիեզերական գիտակցություն ձևավորման համար պետք է ստեղծել համապատասխան կրթական միջավայր, որը երեխային կտա տիեզերական դաստիարակություն, կնպաստի նրա տիեզերական գիտակցության ձևավորմանը, դաստիարակությանն ու կրթությանը:

Անցած XX դարը գիտելիքների բոլոր բնագավառներում հարուստ էր իր նվաճումներով: Շատ հետազոտողներ այն մասնավորապես անվանում են «Տիեզերքի դար». և դա բնական է. XX դարի ամենակարևոր նվաճումը հարազատ մոլորակի սահմաններից մարդու դուրս գալն է: Արդի բազում մասնագետներ հանգել են այն եզրակացության, որ մարդու բազմաթիվ խնդիրներ պայմանավորված են տիեզերքի մասին նրա սխալ պատկերացումներով: Փաստորեն մարդը պետք է ուսումնասիրի տիեզերքը, որպեսզի հասկանա ինքն իրեն և իր դերը, իր ակունքները տիեզերքի զարգացման մեջ: Այդ մասին Վ. Ի. Վերնադսկին նշում է, որ «Դա ինքնագիտակցման ամենախորը արտահայտումն է, երբ մտածող մարդը փորձում է սահմանել իր տեղը ոչ միայն մեր մոլորակի վրա, այլ նաև Տիեզերքում [1, 50]: Իսկ Ռ. Բեկը նշում է. «Տիեզերական գիտակցություն» տերմինը, որը նշանակում է մարդու և Տիեզերքի կապի գաղափարի ըմբռնումը, հաճախ է հանդիպում գրականության մեջ, սակայն միանշանակ սահմանում չունի [2, 4]:

Հենց «գիտակցություն» բառը վերաբերում է հոգեբանության ոլորտին: Այդ բառի նշանակություններից մեկն է «շրջակա իրականության մարդուն հատուկ ընկալում և ըմբռնում» [3]:Այս մասին իր տեսակետն է ներկայացրել նաև ազատ դաստիարակության մանկավարժության հռչակավոր ներկայացուցիչ Կ. Ն. Վենտցելը՝ նշելով, որ «Պետք է կառուցել նոր մշակույթ տիեզերական հիմքի վրա, միայն դա կբերի բոլոր այն բացասական երևույթների վերացմանը, որոնք հանդիսացել են անցյալի մշակույթի պտուղ» [4, 206]:

Ի՞նչ դեր է խաղում տիեզերական գիտակցությունը մարդկանց կյանքում:Ըստ մարդկության մեզ հայտնի պատմության՝ այն կարելի է ներկայացնել որպես տիեզերքի մասին պատկերացումների և գիտակցության զարգացման պատմություն:Այդ գաղափարն արտահայտել է ֆրանսիացի կենսաբան և փիլիսոփա Պիեր Տեյար Շարդենը՝ տեսնելով էվոլյուցիայի ուղղվածությունը գիտակցության աճի մեջ. «Էվոլյուցիան գիտակցության աճն է»

[5, 193]:

Տիեզերական գիտակցությունը մարդու ձգտումն է՝ գիտակցելու ինքն իրեն: Այն ձևավորում է երեխային որպես մտածող էակ, կարևոր դեր է խաղում նրա կյանքում և որոշում է նրա կյանքի դիրքորոշումն ու հետագա ճակատագիրը:Տիեզերական գիտակցությունը՝ մարդկային ինտելեկտի արմատական առանձնահատկությունն է, աշխարհայացքի ամբողջական մոտեցման որոնումները և աշխարհըմբռնման ամբողջական մոտեցումը: Տիեզերական գիտակցությունը սկսում է մուտք գործել մարդկային գործունեության բոլոր ոլորտները: Այն ավելի հաճախ է արտացոլվում գեղանկարչության և երաժշտության մեջ: Ժամանակակից զարգացման բոլոր մակարդակներում՝ գիտական, մշակութային, կենցաղային, մենք դիտում ենք մարդու գիտակցության մեջ հին կոսմիզմի գաղափարի վերածնունդը, և դա բնական է: Ահա թե ինչու է հենց այսօր այդքան անհրաժեշտ դաստիարակության և կրթության մեջ հաշվի առնել մարդու տիեզերական ակունքը, նրա տիեզերական գիտակցությունը: Սակայն դա արդեն կլինի տիեզերական դաստիարակություն և տիեզերական կրթություն: Երեխաների ստեղծագործական որակների և ազատ ստեղծագործ անձի դաստիարակությունը, նրանց պոտենցիալի առավելագույն բացահայտումը այսօր մանկավարժության մեջ գլխավոր խնդիր է համարվում. անձի զարգացումը տեղի է ունենում շրջակա աշխարհի ճանաչման և գիտակցության ընդլայնման գործընթացում: Երեխաների մտածողության կողմնորոշումը դեպի տիեզերք կարող է խթանել ստեղծագործական անհատական սկզբնակետի առավելագույն զարգացումը: Եվ դա կլինի ամենաբարձր ստեղծագործությունը, որին կարելի է հասնել՝ Տիեզերականը: Տիեզերական դաստիարակության նպատակը երեխայի ստեղծագործական անհատական ակունքի զարգացումն է: Համաձայն Կ. Ն. Վենտցելի՝ տիեզերական դաստիարակության հիմնական խնդիրը երեխայի տիեզերական ինքնագիտակցության զարգացումն է, այսինքն՝ սեփական անձի ընկալումն է որպես տիեզերքի անբաժանելի մասի: Մանկավարժին անհրաժեշտ է սանի գիտակցությանը հասցնել այն, որ նա տիեզերքի հետ կազմում է միասնական անբաժան աբողջություն [4, 210]:

Տիեզերական դաստիարակության գործընթացում կարևոր է տիեզերական-էկոլոգիական և տիեզերական-էսթետիկ մտածողության ձևավորումը՝ որպես կարևորագույն բարոյական սկզբունք: Տիեզերական դաստիարակության հաջորդ խնդիրը տիեզերքի կյանքում երեխայի ստեղծագործորեն մասնակցելու ձգտումն և զարգացումն է: Երբեմն աճող սերունդները չեն տեսնում, թե ուր և ինչի համար է ուղղված նրանց կյանքը: Շատ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է աճող սերնդի գիտակցության նոր կողմնորոշումը: Այդպիսի կենսական կողմնորոշիչ կարող է համարվել տիեզերական գիտակցությունը: «Նոր աշխարհն

ունի նոր պայմաններ և պահանջում է նոր գործողություններ: Անհնարին է մուտք գործել նոր աշխարհ հին մեթոդներով, դրա համար դիմում եմ գիտակցության վերասերմանը» [6, 434]:

Տիեզերական գիտակցությունը բարձրացնում է երեխայի մշակութային մակարդակը, զարգացնում է հոգևոր արժեքների նոր համակարգ կյանքի նկատմամբ, ստեղծում է խորը հարգանք, սովորեցնում է նրան սիրել, կարեկցել և լինել հանդուրժող, հասկանալ, որ վնասելով ուրիշներին, առաջին հերթին, վնասում է ինքն իրեն: Սրանց գիտակցումը անձի մեջ ձևավորում է տիեզերական աշխարհայացք:

Ծնողների և դաստիարակների առջև այսօր բացվում է որոնման և ինտենսիվ ստեղծագործական աշխատանքի ընդարձակ ճանապարհ: Եվ միայն լիարժեք ազատության և անկախության դեպքում կարող է դրսևորվել երեխայի անհատական բնավորությունը, բնածին հետաքրքրությունը և ճանաչողական գործունեությունը: Ուրեմն՝կրթության ռազմավարության կարևոր պահանջներից է երեխայի ազատության ու անկախության ապահովումը, իսկ նման ազատությունը հնարավոր է միայն հատուկ կազմակերպված միջավայրում, որը համապատասխանում է երեխայի կարիքներին և հնարավորություններին: Կարևոր պայման է նաև հարմարավետ այնպիսի կրթական միջավայրի ստեղծումը, որում երեխան կարող է բավարարել իր ճանաչողական հետաքրքրությունները տարբեր բնագավառներում, գիտակցել աշխարհի ամբողջականությունը, ընկալել իր ես-ը որպես այդ ամբողջության մի մասնիկ:

Հայտնի իտալացի ուսուցիչ, երեխայի տիեզերական կրթության համակարգի ստեղծող Մ. Մոնտեսորին նշել է, որ շատ կարևոր է հատուկ նախապատրաստական զարգացնող միջավայրի ստեղծումը, որտեղ կապահովվի՝

1.երեխաներին պարապմունքների ընթացքում ազատության տրամադրումը,

2. փոխադարձ վստահությունը, համագործակցությունը,

3. ինքնուրույն ուսումնական գործունեության ընթացքում օգնության տրամադրումը,

4. մանկավարժի կողմից անհատական և ընդհանուր թեմատիկ պարապմունքների անցկացումը՝ գիտելիքների տարբեր բնագավառներում:

Ուսուցիչը, ստեղծելով զարգացնող և հարմարավետ միջավայր և իր վրա վերցնելով երեխային հետևողի և օգնականի դերը, փոխանցում է ամբողջ ակտիվությունը երեխաներին: Հենց դա էլ երեխայի կողմից անկախության ձեռքբերման համար ամենակարևոր պայմանն է: Իսկ անկախությունն ու ինքնուրույնությունը՝ մարդկային արժանապատվության հիմքերն են [7]:

Ելնելով այս ամենից՝ մենք ներկայացրել ենք տիեզերական գիտակցության ձևավորման գործում երեխայի կարիքները և մեկնաբանել, թե ինչ կտա դա երեխային:

Տիեզերական գիտակցության ձևավորման գործընթացում աշակերտների կարիքների հաշվառումը.

1. հարմարավետ միջավայրի առկայություն,

2. հասկացվածություն միջավայրի կողմից,

3. ազատ ինքնադրսևորման հնարավորություն,

4. սիրո և հարգանքի միջավայրի ապահովում։

Տիեզերական գիտակցություն ձևավորող կրթական միջավայրի մանկավարժական պայմաններն են՝

1. տիեզերական գիտակցություն ունեցող աշակերտական խմբի ձևավորում,

2. հարգանք երեխայի տիեզերական գիտակցության դրսևորումների նկատմամբ (աջակցություն այդ գիտակցությանը),

3. ազատ ինքնադրսևորման, ինքնազարգացման պայմանների ապահովում,

4. տիեզերական գիտակցության ընդարձակմանը միտված ճանաչողական հետաքրքրությունների ընդարձակում ու բավարարում։

Տիեզերական գիտակցության ձևավորման արդյունքում երեխան զգում է, որ՝

1. իր գիտակցության ոլորտում պաշտպանված է և գնահատված,

2. տիեզերական գիտակցության սահմաններում ունի ազատ հաղորդակցվելու հնարավորություն,

3. տիեզերական գիտակցության առկայության մթնոլորտը իրեն բավականություն է պատճառում, չունի լարվածություն, վախեր և անհանգստություն։

Տիեզերական գիտակցության շնորհիվ երեխան ունենում է հետևյալ ձեռքբերումները՝

1. մտքի թռիչք,

2. բարձր ինքնագնահատական,

3. անընդհատ ստեղծագործելու, պրպտելու, որոնելու ձգտում,

4. ինքնագնահատականի բարձրացում,

5. կյանքի նկատմամբ բարձր հարգանք,

6. ճանաչողական գործունեության բարձրացում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Вернадский В. И. Начало и вечность жизни, М. Советская Россия, 1989.
2. Бекк Р. М. Космическое сознание, М.: Золотой век, 1994.
3. Большой толковый словарь русского языка. СПБ.: Норнт, 2000.
4. Вентцель: Антология гуманной педагогики. М.: ИЛША, 1999.

5. Тейяр де Шарден Пьер. Феномен человека. М.: Наука, 1987.
6. Учёные живой Этики. Мир Огненный III. М.: МЦР, 1995.
7. http/www.montessorisad.ru /about/detskiy-sad/Kosmicheskoye-vospitanie/

THE IMPACT OF A CONVENIENT EDUCATIONAL ENVIRONMENT ON THE FORMATION OF A CHILD'S SPATIAL CONSCIOUSNESS

The article presents a comprehensive model of upbringing and education, which is based on the principle of cosmic consciousness. Summarizing modern approaches to cosmic consciousness, it is possible to single out a number of characteristics that determine the consideration in the formation of the needs of schoolchildren, pedagogical conditions, thanks to the formation of cosmic consciousness, the results and achievement of the child's sensations, the proposed theoretical approaches and their implementation also form favorable educational conditions that can be important for the formation the child has cosmic consciousness.

Keywords: *comfortable educational environment, child, influence, cosmic consciousness, socialization, teaching, upbringing*